ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ. Խաչակիրները և հայերը: Հ. Բ. Պատմա-քաղաքագիտական հետազոտություն, *Երևան, 2007, 672 էջ (Հայկական մատենաշար Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան):*

Երկու տարի է անցել ներկա գրքի առաջին հատորի հրատարակությունից[1]: Լևոն Տեր-Պետրոսյանը կատարում է խոստումը և հայագիտության դատին է հանձնում «Խաչակիրները և հայերը» ընդհանուր խորագրով հետազոտության երկրորդ հատորը:

Առաջաբանում հեղինակն ընդգծում է Կիլիկյան Հայաստանի և Արևելքում հիմնված խաչակրաց պետությունների տիպաբանական ընդհանրությունները, փորձում է բնորոշել «միջազգային իրավունք» հասկացությունը ԺԱ–ԺԴ դարերի ընկալումներով: Անդրադառնում է տարածաշրջանում հավակնություններ ունեցող գերտերությունների (Բյուզանդիա, Արևմտյան Եվրոպա, իսլամական հասարակապետություն, մոնղոլներ) քաղաքական նկրտումներին ու գործոններին: Լ. Տեր-Պետրոսյանը Բյուզանդիայի աշխարհակալական ձգտումները համադրում է Արևմտահռոմեական (այն է՝ գերմանական) կայսրության նմանատիպ դիրքորոշմանը: Տարածաշրջանի քաղաքական պատկերն ամբողջացնելու տեսանկյունից ներկայացնում է նաև իսլամական հասարակապետության դիրքորոշումը և գործելակերպը Մերձավոր Արևելքում, սուլթանի ու խալիֆի ինստիտուտների փոխհարաբերությունը, անդրադառնում է սրբազան պատերազմի (ջիհադ) նշանակությանը մուսուլմանի առօրյա կյանքում, զիմմի ազգաբնակչության (քրիստոնյա և հրեա) կարգավիճակին, իսլամական աշխարհակալության սկզբունքներին ու ընկալմանը: Մոնղոլների «տիեզերակալական գաղափարախոսությունը»[2] հեղինակը համարում է «գործնական առումով» ամենահիմնավորվածը: Գրքի այս մասում փոքրինչ բացարձակացված է այն հանգամանքը, որ թե՛ խաչակիրները և թե՛ հայերն իրենց պետությունները ստեղծել են «օտար ժողովուրդներից նվաճված տարածքներում» (էջ 5): Եթե այս դրույթը հիմնավորված է խաչակրաց պետությունների պարագայում, ապա Կիլիկիայի հայկական պետության դեպքում այդ մոտեցումը, կարծում ենք, իրեն չի արդարացնում. Կիլիկիային տեր դարձած հայկական զինվորական ուժերը նվաճողներ չէին, նրանք տարածաշրջանում հայտնվել էին պատմական անհրաժեշտության բերումով, Բյուզանդիայի և սելջուկյան ռազմարշավների ռազմաքաղաքական ճնշման հետևանքով: Սկսած Ժ դարից Բյուզանդիան բռնության և դիվանագիտական համոզման ճանապարհով Մեծ Հայքի տարածքից տեղահան էր անում հայկական բնակչության մի նշանակալի զանգված՝ իր քաղաքական ու եկեղեցական կառույցներով և բնակեցնում Կապադովկիայում, Կիլիկիայում, Հյուսիսային Ասորիքում: Մի կողմից՝ կայսրությունը փորձում էր օգտագործել նրանց ռազմական ուժը ոչ վաղ անցյալում վերագրաված սահմանների ամբողջականությունը պաշտպանելու համար, մյուս կողմից էլ՝ ԺԱ դ. երկրորդ կեսին սելջուկ թյուրքերի ռազմարշավների հետևանքով, նույն Բյուզանդիայից նվաճված փոք-

[1] *Տե՛ս Ա. Բ ո ղ ո յ ա ն. Լևոն Տեր-Պետրոսյան. Խաչակիրները և հայերը: Հ. Ա, ուսումնասիրություն և թարգմանություն, Երևան, 2005, 552 էջ.– ՊԲՀ, 2006, №1, էջ 309:*

[2] *Մոնղոլական հսկայածավալ կայսրությունում իշխանության լեգիտիմության խնդիրը քննարկում է նաև գերմանացի հետազոտող Թ. Նագելը, տե՛ս* Т и л ь м а н Н а г е л ь. Тимур-завоеватель и исламский мир позднего средневековья. Перевод с немецкого Ясинской Л. И., Ростов-на-Дону, 1997, с. 65–74, 87–96.

բասիական նահանգներում և Հյուսիսային Ասորիքում, հրոսակների տարերային ներխուժումների պատճառով ստեղծվել էր անիշխանական վիճակ, քաղաքական վակուում և քաոս, որը կարողացան իրենց օգտին աշխատեցնել Բագրատունյաց Հայաստանի կործանումից հետո Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում հաստատված հայկական ռազմաքաղաքական ուժերը[3]*: Այս առումով անհնար է հավասարման նշան դնել խաչակիրների և Կիլիկիայի հայկական իշխանությունների գործելակերպերի ու քաղաքական նպատակադրումների միջև: Այլ բան է, որ Կիլիկիայի հայկական պետությունը հետզհետե երկրի կառավարման համակարգը նմանեցրեց խաչակրաց պետությունների կարգավիճակին: Մեծ տերությունները, կիրառելով «բաժանիր, որ տիրես» սկզբունքը, փորձում էին փոքր պետություններին պահել իրենց սատելիտների ծիրում, տարածաշրջանում չէր գործում նույնիսկ «կրոնական համերաշխության գիտակցությունը» (էջ 25): Ի տարբերություն խաչակրաց պետությունների՝ հեղինակն իրավամբ մեծ տեղ է տալիս կիլիկյան պետության մեջ ազգային ինքնագիտակցության դրսևորման փաստերին (էջ 30–31), հիմնախնդիր, որի բազմակողմանի հետազոտությունը կարող է նոր հորիզոններ բացել տարածաշրջանի պատմության ուսումնասիրության ասպարեզում: Բազմաթիվ հարցադրումների այս նոր ու թարմ հոլովույթում Լ. Տեր-Պետրոսյանը կարևոր տեղ է հատկացնում գահաժառանգման հստակ կարգի առկայության հետազոտությանը: Մանավանդ, որ հեղինակն իրեն հետաքրքրող դարաշրջանի մասին խոսող սկզբնաղբյուրների բազմաշերտ հանքում հայտնաբերել է դեռևս անմշակ մի շերտ, որը ցայսօր չի արժանացել միջնադարագետ-հետազոտողների ուշադրությանը: Պիտի շեշտել ներկա ուսումնասիրության հատկապես քաղաքագիտական նշանակությունը, որը բխում է հեղինակի փորձառության հսկայական պաշարից և ուղեկցվում է աղբյուրագիտական նուրբ կառուցումներով:*

Աղբյուրագետ-բանասեր-պատմաբանը «Նախագիտելիքում» հետազոտության ծիրի մեջ է ներքաշում ոչ միայն հայոց իրավունքի, այլ նաև քաղաքական մտքի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետներին, այնուհետև ներկայացնում է թագավորի ինստիտուտի էության խնդրին անդրադարձած կիլիկյան շրջանի կարևորագույն սկզբնաղբյուրները՝ Վահրամ Ռաբունու «Բան ի Յայտնութիւն Տեառն» և Հովհաննես Երզնկացու «Ի բանն առաքելոյ» ճառերը, որոնց հետազոտությունը նոր ուղիներ են մատնանշում զարգացած միջնադարի հայոց պետական իշխանության և նրա ինստիտուտների ուսումնասիրության բնագավառում:

Անցնելով իրեն հետաքրքրող բուն նյութի քննարկմանը՝ հեղինակը աղբյուրագիտական լայն հենքով ուշադրություն է հրավիրում Կիլիկիայի հայկական իշխանության կառավարողների՝ Ռուբինյան իշխանական տան անդամների կողմից գահին տիրելու օրինաչափությունների (լեգիտիմություն, ժառանգի ընտրություն) վրա: Անդրադառնալով Ռուբեն Ա-ի գործունեության մասին խոսող սկզբնաղբյուրների վկայությունների և մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների քննմանը՝ հեղինակը վերստին անդրադառնում է Ռուբինյան առաջին իշխանի պատմականության խնդրին: Այստեղ, իհարկե, պետք է շեշտվեր նաև, որ ԺԲ դարի բազմաթիվ իրադարձությունների համար Սամուել Անեցու երկը կա և մնում է տարածաշրջանի պատմության կարևորագույն սկզբնաղբյուր. զորօրինակ՝ Գրիգոր Գ Պահլավունու կողմից Կաթողիկոսական աթոռը Անի տեղափոխելու մասին ծրագիրը: Սամուել Անեցու երկում Ռուբեն Ա իշխանի և առաջին կիլիկյան իշխանների մասին տեղեկությունների հետսամուտ լինելը, կարծում եմ, դեռևս չի նշանակում, որ առասպել պետք է համարենք Ռուբենի պատմական անձնավորություն լինելու՝ ԺԲ–ԺԳ դարի հայալեզու և օտար հեղինակների վկայությունները: Ռուբենի և Կոստանդինի գործունեությանը անդրադարձած ԺԲ դ. սկզբնաղբյուրների աղքատությունն առաջին հերթին խո-

[3] *Այդ մասին տե՛ս նաև Ա. Ա. Բ ո զ ո յ ա ն. Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, էջ 52:*

սում է այն մասին, որ ԺԲ դ. սկզբին դեռևս ձևավորված չի եղել Ռուբինյան պաշտոնական պատմագրական ավանդույթը, քանի որ հայկական օյկումենեյում բազմաթիվ իշխանություններ էին հավակնում առաջինը լինելու պատվին: Այդ է նաև պատճառը, որ Հայոց կաթողիկոսարանը ազգային ուժերը չջլատելու միտումով խուսափում էր աթոռը հաստատել հայկական որևէ իշխանության տարածքում:

Կիլիկիայում լեգիտիմ իշխանություն հաստատելու տեսանկյունից, կարծում ենք, կարելի էր նաև քննարկել սկզբնաղբյուրների վկայությունները Փիլարտոսի կողմից իսլամի ընդունման և սելջուկյան պետության գերակայությունն ընդունելուն նպատակաուղղված քայլերը, մանավանդ այն բանից հետո, երբ Իկոնիայի սուլթան Սուլեյման իբն-Կութուլմիշը սկզբում ամբողջովին շրջափակման մեջ առավ, իսկ ապա նվաճեց Կիլիկիան: Պակաս ուշագրավ չէր լինի նաև Ապլղարիպ Արծրունու և նրա փեսա Օշին Հեթումյանի իշխանությունների լեգիտիմության քննարկումը Ռուբինյան հայկական իշխանության քաղաքական կայացման տեսանկյունից, քանի որ Օշինի հետնորդները ևս Կիլիկիայի պատմության ողջ ընթացքում փորձում էին լեգիտիմացնել սեփական իշխանությունը: Այս առումով հայագիտության մեջ դեռևս հստակ չէ սկզբնաղբյուրներում հիշատակվող Նաթանայելյան և Հայկազունի տների դերակատարությունը հիշյալ գործընթացում, ինչպես Բագունիների պարագայում իրավացիորեն մատնանշում է Լ. Տեր-Պետրոսյանը (էջ 85):

Թորոս Ա-ի (1100–1129) իշխանության ժամանակաշրջանից սկսած՝ սկզբնաղբյուրների վկայությունները հետզհետե ավելի ստույգ են դառնում և թույլ են տալիս հետազոտողին իր տեսակետները կառուցել տեղեկությունների ավելի ամուր հողի վրա: Այստեղ հեղինակն իրավացիորեն ընդգծում է, որ ժամանակի բազմալեզու սկզբնաղբյուրները Կոստանդինի մահից հետո իբրև հավասարազոր իշխաններ են համարում Թորոս Ա-ին և Լևոն Ա-ին (էջ 88–91): Մեր կարծիքով՝ նման կացությունը de jure բնույթ կարող էր ստանալ միայն Դեսբոլի պայմանագրից հետո: Լևոնի նկատմամբ Թորոսի գերակայության մասին փաստարկները կարող են խոսել այն մասին, որ թեպետ բյուզանդական իշխանությունները ճանաչել են երկու եղբայրների հավասարազորությունն իրենց պետության առջև, սակայն, ըստ հայկական ժառանգական իրավունքի, գործել է նաև Թորոսի առաջնածնության գաղափարը: Հոր կողմից երկու որդիների միջև իշխանության բաժանման վարկածը առկա սկզբնաղբյուրների վկայություններով անհնար է հիմնավորել, այլ բան է, եթե ենթադրենք, որ տվյալ պարագայում գործում է «բաժանիր, որ տիրես» դարերի մեջ փորձված բյուզանդական քաղաքական գիծը: Այս տեսանկյունից հատկանշական է, որ ԺԲ դարի 50-ական թվականներին բյուզանդացիները «սեբաստոս» տիտղոսով պատվում էին ոչ միայն Ռուբինյան իշխան Թորոս Բ-ին, այլ նաև Հեթումյան իշխան Օշինին[4]: Թորոսի կողմից սեբաստոս տերմինի օգտագործումն իսկ արդեն ցույց է տալիս, որ նա իր իշխանությունը պատկերացնում է բյուզանդական քաղաքական ազդեցության ծիրում: Ինչ վերաբերում է Աննա Կոմնենեի երկում օգտագործված avθprwπos" *տերմինին, ապա այն ժամանակի սկզբնաղբյուրներում անկասկած կախվածություն է մատնանշում[5]:*

Իրավացի է Լ. Տեր-Պետրոսյանը, երբ հակադրվում է Վ. Ռուդ-Կոլենբերգի տեսությանը, ըստ որի՝ իշխանության անցումը Թորոս Ա-ից Լևոն Ա իշխանին «մահմեդական սովորույթի ազդեցության արտահայտություններից է հայ իրականության մեջ» (էջ 101–105): Օրինական ժառանգի բացակայության պայմաններում իշխանության անցումը մերձավորագույն արյունակցին ընդունված պրակտիկա է թե՛ մուսուլ-

---

[4] *Հեթումյաններին «սեբաստոս» տերմինով պատվելու վկայությունները հայտնի են նաև Լ. Տեր-Պետրոսյանին (էջ 99, ծան. 59): ԺԲ դարի ընթացքում Կիլիկիայի թե՛ Ռուբինյան և թե՛ Հեթումյան իշխանները կարևորում էին սեբաստոսության պատվի ստացումը բյուզանդական իշխանությունների կողմից (էջ 100):*

[5] *Տե՛ս Ա. Կաժդանի հանրագիտարանային հոդվածը* (The Oxford Dictionary of Byzantium, vol. 1, New York, Oxford, 1991, p. 111)*:*

մանական և թե՛ քրիստոնեական աշխարհում: Սակայն այստեղ Լ. Տեր-Պետրոսյանը, հակադրվելով իր իսկ կողմից հմտությամբ շրջանառության մեջ դրված փաստին[6], այնուամենայնիվ, հարցականի տակ է դնում ակնհայտը՝ Թորոս Ա-ի Կոստանդին որդու սպանության պարագան (էջ 102–104): Չենք կարծում, թե թագավորական իշխանության լեգիտիմությունը շեշտող և ջատագովող ԺԳ դ. երկրորդ կեսի հեղինակները փաստեր բերեին, որոնք, չհամապատասխանելով պատմական իրականությանը, ակամա հակասեին իրենց իսկ ստեղծած քաղաքագիտական տեսությանը և կառուցումներին:

Քննարկելով Լևոն Ա-ի իշխանավարության շրջանում՝ 1136/7 թ., նրա որդիների միջև ծագած գժտության դեպքը՝ Լ. Տեր-Պետրոսյանը շարունակում է հավատարիմ մնալ իր որդեգրած սկզբունքին. ճշտել սկզբնաղբյուրների վկայությունների հավաստիությունը, անդրադառնալ մերօրյա պատմագիտական գրականության հիմնական մոտեցումներին և լուծումներին, փորձել խնդիրը պարզաբանել գահաժառանգման կարգի իրավական դաշտի պատմաքաղաքագիտական շրջանակներում: Այստեղ կարելի էր արձանագրել Կիլիկյան Հայաստանում լեգիտիմության համար պայքարի մի կարևոր արձագանք ևս. և՛ Թորոս Ա-ը, և՛ Լևոն Ա-ն իրենց որդիներին Կոստանդին անունն են տվել: Արդյոք սա չի՞ նշանակում, որ եղբայրների միջև իշխանության համար պայքարը սկսվել է շատ վաղուց և իներցիայով փոխանցվել է նրանց հետնորդներին[7]: Անցնելով Լևոն Ա-ին սկզբնաղբյուրներում տրված բյուզանդական տիտղոսների նշանակության բացահայտմանը, հեղինակն իրավացիորեն ենթադրում է, որ մինչև Թորոս Ա-ի մահը Լևոն Ա-ը, «թեկուզ ստորակայի կարգավիճակով, կիսել է իշխանությունը իր եղբոր հետ» (էջ 110): Ընթերցողն ակնկալում էր, որ Լ. Տեր-Պետրոսյանը կանդրադառնա Հովհաննես Ա Կոմնենոսի կիլիկյան ռազմարշավի կազմակերպմանը առիթ ծառայած բյուզանդական կողմի առաջ քաշած ամենածանրակշիռ մեղադրանքին՝ Լևոն Ա-ը մերժել է Բյուզանդական կայսրության գերակայությունը և իրեն թագավոր հռչակել[8]: Խնդիր, որն առաջին հերթին պահանջում էր քաղաքագիտական լուծում և պահանջում է միջազգային փոխհարաբերությունների ու հայկական իշխանության կայացման կամ լեգիտիմության տեսանկյունից նորովի քննարկում:

Թորոս Բ-ի կողմից Կիլիկիայի հայկական իշխանության վերականգնման պատմական սկզբնաղբյուրների աղբյուրագիտական հետազոտությունը, մեր կարծիքով, թույլ է տալիս նրա քաղաքական ակտիվ գործունեությունը տանել երկրորդ խաչակրաց ռազմարշավի ժամանակները: Դրա համար կարող է անուղղակի փաստ ծառայել նաև այն հանգամանքը, որ Ինաբի ճակատամարտին (1149 թ.) և դրան հաջորդող իրադարձություններին, որին մասնակցում են Փոքր Ասիայի և Հյուսիսային Ասորիքի քաղաքական գրեթե բոլոր շահագրգիռ ուժերը, կիլիկյան հայկական իշխանության գոյության մասին սկզբնաղբյուրներում (հատկապես Գրիգոր Երեցի մոտ) ակնարկ

---

[6] *Նկատի ունենք Ղ. Ալիշանի հրապարակած՝ Անավարզայի եկեղեցու արձանագրությունը. տե՛ս Ղ. Ա լ ի շ ա ն. Սիսուան, Վենետիկ, 1901,էջ 239:*

[7] *Այս առումով, մեր կարծիքով, ուշագրավ է, որ Սմբատի տարեգրության համառոտ տարբերակներում և Սամուելի Ժամանակագրության մեջ Կոստանդին Ա-ի կրտսեր որդու՝ Լևոն Ա իշխանի (1129-1137) զավակներից մեկի անունը ևս Կոստանդին է (տե՛ս Ա. Բ ո զ ո յ ա ն. Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը…, էջ 95), թեպետ սկզբնաղբյուրները մատնանշում են նրա անօրինական ամուսնության պտուղ լինելու հանգամանքը: Պատմագրության համար պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ Թորոս Ա իշխանի միակ ժառանգին Վահրամ Ռաբունին անվանում է Կոստանդին (տե՛ս նույն տեղում, էջ 80): Այս հանգամանքը ևս մեկ փաստարկ կարող է լինել երկու եղբայրների ժառանգական մրցակցության մասին, որին անդրադառնում է Լ. Տեր-Պետրոսյանը (էջ 88 և հետև.):*

[8] *Հ ր. Բ ա ր թ ի կ յ ա ն. Միքայել Ռտալիկոսի «Ներբողյանը» և Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը.– ՊԲՀ, 1984, № 4, էջ 216:*

չկա[9]: Թեպետ Թորոս Բ-ի բուռն քաղաքական գործունեությունը և հատկապես Անտիոքի իշխան Ռեյնալդ Շատիլոնցու հետ Կիպրոսի գրավումն ու ավարառումը կարող էին լուրջ առիթ ծառայել Մանուել Ա Կոմնենոսի 1158/9 թթ. ռազմարշավի համար, սակայն այդ ձեռնարկի հիմնական պատճառը, մեր կարծիքով, Բյուզանդական կայսրության ուժի ցուցադրումն էր Հալեպի աթաբեկությանը և Մերձավոր Արևելքի քաղաքական ուժերին:

Ռուբեն Բ և Մլեհ իշխանների բաժնում հայագիտության տեսանկյունից էական նվաճում է հեղինակի անդրադարձը Կիլիկիայի հայկական իշխանության միջավայրում խնամակալության ինստիտուտի առաջացմանը[10] և Մլեհի կողմից իշխանության զավթման ու օրինականացման հիմունքներին (էջ 129–136, 141–143): Մլեհի մասին սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների աղբյուրագիտական և պատմագրության մեջ հայտնված տարամետ կարծիքների մանրամասն քննությամբ հեղինակը վեր է հանում Մլեհի՝ իբրև քաղաքական գործչի հակասականությունը. փաստորեն, ցույց է տրվում, որ նրա իշխանապետության շրջանը Կիլիկյան պետության լեգիտիմության ձեռքբերման ճանապարհին կարևոր հանգրվան է եղել, թեպետ իշխանության անցումը Մլեհին ժամանակակիցների տեսանկյունից օրինական չի ճանաչվել: Այս հատվածում կարելի էր մասնագետների ուշադրությունը հրավիրել նաև այնպիսի մի կարևոր խնդրի վրա, ինչպիսին մահվանից առաջ Թորոս Բ իշխանի վանական դառնալու մասին Միքայել Ասորու[11] վկայությունն է: Նման պրակտիկայի էին հետևում բյուզանդական կայսրերը, Արևմտաեվրոպական և խաչակրաց պետությունների բազմաթիվ տիրակալներ, վերջապես իրերի նման դրություն է արձանագրված Կիլիկյան Հայաստանի Հեթում Բ արքայի (1289, 1293, 1295, 1297, 1299, 1301) իշխանության ընթացքում[12]: Այս խնդիրը ևս, մեր կարծիքով, անուղղակիորեն կապ ունի Թորոս Բ-ի և Ռուբինյան իշխանության լեգիտիմության հարցի հետ:

Հեղինակն իրավացիորեն նկատում է, որ Բյուզանդիայից վասալական կախման անհրաժեշտությունը վերանում է Միրիոկեֆալոնի ճակատամարտում (1176 թ.) բյուզանդական բանակի պարտությունից հետո: Ռուբեն Գ իշխանի գերությունը Անտիոքում նոր փոխհարաբերությունների սկիզբ են դնում Անտիոքի և Կիլիկիայի իշխանությունների միջև: Միայն Լևոն Բ իշխանի ջանքերի գերլարման հետևանքով Կիլիկիայի հայկական իշխանությունը կարողանում է հետզհետե հետ բերել կորցրածը, թեպետ դեռևս երկու տասնամյակ միջազգային հանրության կողմից դիտվում է իբրև Անտիոքի իշխանության վասալը (էջ 160–163):

Սկզբնաղբյուրների քննությամբ Լ. Տեր-Պետրոսյանը կարողանում է ցույց տալ, որ Լևոնն իր գործունեության առաջին շրջանում իշխանությանը տիրացել է իբրև Ռուբեն Գ-ի դստերի խնամակալ: 1194 թ. Բոհեմունդ Գ-ի հետ կնքած պայմանագրով, որի բովանդակությունը վերականգնվում է սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների ամփոփումով, Լևոն Բ իշխանը, օգտվելով քաղաքական նպաստավոր պայմաններից, կարողանում է փոխել Կիլիկիայի հայկական պետության քաղաքական կարգավիճակը և Անտիոքի իշխանության ստորակայից վերածվում է այդ իշխանության գերակայի: Գիտնականը խնամակալի կարգավիճակից երկրի օրինական տերը դառնալու Լևոնի մտահոգության հետ է կապում նաև 1189 թ. Կիլիկյան Հայաստանի

---

[9] *Ս. Բ ո զ ո յ ա ն. Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը…, էջ 158-163:*

[10] *Այս ինստիտուտին ժամանակին անդրադարձել է նաև Ս. Բոռնազյանը (տե՛ս Ս. Վ. Բ ո ռ ն ա զ յ ա ն. Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV դարերում, Երևան, 1973, էջ 67-70):*

[11] Cf. Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioch (1166–1199); éd. et trad. franç. par J.-B. Chabot, t. III, Paris, 1905, p. 331.

[12] *Իշխանությունից հրաժարվելուց հետո վանական սքեմ է ընդունել նաև Ռուբեն Գ-ը (էջ 163):*

սկսած բանակցությունները Արևմուտքի տիրակալների ու Բյուզանդական կայսրության հետ՝ թագավորի տիտղոս ստանալու համար ձգտելով օծման շնորհիվ Հայոց գահին տիրելու ցմահ իրավունք ստանալ (էջ 180–182, 184–185): Այստեղ, իհարկե, հեղինակի ուշադրությունը պետք է հրավիրել այն փաստի վրա, որ Ներսես Լամբրոնացին իր «Առ Լևոն» թղթում, որը գրվել է մինչև Լևոն իշխանի օծումն իբրև թագավոր, նրան Կիլիկիայի «քրիստոսազոր իշխող», ինքնակալ է կոչում[13]: Լևոնի թագադրությամբ, ըստ Լ. Տեր-Պետրոսյանի, լուծվում է ոչ միայն նրա անձնական «լեգիտիմության», այլ նաև Հայոց պետության միջազգային իրավական կարգավիճակը (էջ 186): Պատմագրության համար արժեքավոր է հեղինակի անդրադարձը Լևոն Ա-ի և նրա հետնորդների կողմից շրջանառության մեջ դրած «Ամենայն Հայոց թագավոր» տիտղոսին (էջ 196–201), Ռուբինյանների արքայական ծագման մասին լեգենդի հորինմանը և Բագրատունիների իրավահաջորդը լինելու մտքի տեսականացմանը (էջ 202–204): Ռուբինյան պետության «լեգիտիմության» ամրապնդմանն ուղղված այս հնարանքների կարևորության և սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների համապարփակ քննությանն են նվիրված բաժնի հաջորդ էջերը (էջ 206–209): Գրքի այս հատվածում կարող էր քննարկման առարկա դառնալ Ամենայն Հայոց կաթողիկոսի դերը թագավորի օծման գործընթացում, որը թագավորական իշխանության լեգիտիմությունն ապահովելու կարևորագույն պայմաններից մեկը պետք է համարել հայկական ողջ օյկումենյում: Հեղինակը հայ պատմագրության ապագայի ներկայացուցիչներին է թողնում «լեգիտիմությանը» վերաբերող այնպիսի խնդիրների հստակեցումը, ինչպիսիք են Լևոնի ստեղծած պետության տեղը աշխարհի տիրակալների ընտանիքում: Պատմագրության համար կարևոր նշանակություն ունի Կիլիկիայի և Անտիոքի միացյալ պետություն ստեղծելու Լևոն Մեծագործի նպատակների քննարկումն ըստ սկզբնաղբյուրների և ժամանակակից պատմագրության տեսական քննարկումների (էջ 230-235): Շեշտադրումների մեջ պետք էր ընթերցողին հիշեցնել Ռուբեն Գ իշխանի դուստր Ալիսի դերակատարությունը գահաժառանգության խնդիրների հետ կապված իրադարձությունների հորձանուտում: Մեր կարծիքով՝ թե՛ Ալիսի և թե՛ հետագայում Լևոնի դուստր Զապելի դեպքում նրանց ժառանգական իրավունքները շարունակվել են նաև ամուսնությունների կամ արու ժառանգ ունենալու դեպքում, այդ իսկ պատճառով նրանց պետք է համարել համահավասար գահակալներ Ռուբեն Ռայմոնդի, Փիլիպոսի և Հեթում Ա-ի հետ, հանգամանք, որին համապատասխան ուշադրություն չի դարձվել Լևոն Ա թագավորի վերջին տարիների և մահից հետո ընկած ժամանակաշրջանը նկարագրող գլուխներում:

Պատմաբանի համար հատկապես հետաքրքիր է քաղաքական կոնյուկտուրայի փոփոխությունները, որոնք հիմք են դարձել Կոստանդին պայլի համար իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու խնդրում: Այս հատվածում Լ. Տեր-Պետրոսյանը քաղաքագետ-պատմաբանի հոտառությամբ ու սկզբնաղբյուրների հայտնած տեղեկությունների նուրբ քննարկումով մեկը մյուսի հետևից լուսաբանում է Լևոն Ա-ի վերջին տարիներից Կիլիկյան Հայաստանի իշխանությունների առջև կանգնած դժվարությունները, որոնք կապված էին գահաժառանգման կարգի և իշխանության «լեգիտիմության» խնդիրների հետ:

Հեթում Ա-ի և Զապելի իշխանության, Կոստանդին պայլի խնամակալության շրջանին է նվիրված գրքի հաջորդ բաժինը (էջ 254–296): Հեղինակն անդրադառնում է Կոստանդին խնամակալի գործունեության նոր շրջանի գահաժառանգման կարգի և իշխանության «լեգիտիմության» խնդրի հետ առնչվող հիմնական սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների հետազոտությանը: Խոսվում է Կիլիկիայում արդեն կայացած «Արքունի ատյանի» գոյության մասին, որը 1226 թ. որոշում ընդունեց Զապելին ամուսնացնելու Կոստանդին պայլի զավակ Հեթումի հետ և վերջինիս օծելու Հայոց թագավոր: Այդ ինստիտուտի ու դրա կողմից խնամակալ նշանակելու գործառ-

[13] *Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի Ատենաբանութիւն եւ թուղթ եւ ճառք, Վենետիկ, 1865, էջ 203-242:*

նության մասին Լևոն Տեր-Պետրոսյանը խոսում է ավելի վաղ ժամանակներից (Սլեհի մահից հետո)՝ այն նույնացնելով խաչակրաց արևելքի պետությունների համանման ինստիտուտների հետ (էջ 131–135): Փիլիպոս Անտիոքացուց իշխանության անցումը Հեթում Ա-ին հեղինակն անվանում է «պետական հեղաշրջում» (էջ 257), որը, մեր կարծիքով, ճշգրիտ է արտահայտում իրերի վիճակը, եթե նկատի ունենանք, որ իշխանության լծակներն անտիոքյան կողմնորոշման կողմնակիցներից կրկին անցնում են հայ իշխանների ձեռքը: Լ. Տեր-Պետրոսյանն անդրադառնում է նաև Զապելի ապստամբությանը վերաբերող սկզբնաղբյուրների հաղորդած վկայությունների քննարկմանը (էջ 255–257), ինչպես որ իր տեղում անդրադարձել էր Ռուբեն-Ռայմոնդի և նրա մայր Ալիսի բարձրացրած խռովությանը (էջ 227–229): Հատկանշական է, որ երկու խռովությունների օջախն էլ եղել է Սելևկիա քաղաքը, որը գտնվում էր Հիվանդախնամ ասպետների կարգի իշխանության ներքո: Պատմագրության համար կարևոր ներդրում է նաև գիտնականի դիպուկ դիտողությունը. Կիլիկիայի հարստությունների բաժանումը Ռուբինյանների և Հեթումյանների արհեստական է, քանի որ պաշտոնական հրովարտակներում նման բաժանման որևէ հետք չկա (էջ 258–261): Իհարկե, կարծում ենք, դույզն - ինչ չափազանցված է Կիլիկիայի նման փոքրիկ պետության առաջին դեմքի մասին խոսելիս սկզբնաղբյուրներում նրա նկատմամբ տածած հարգանքի և գովաբանության վկայությունները համարել երկրում Կոստանդինի «անձի պաշտամունքի» վկայություն (էջ 282–287): Գուցե տերմինը լավ չէ ընտրված, քանի որ Կոստանդնի խնամակալության շրջանը Լ. Տեր-Պետրոսյանը համարում է «Հայոց թագավորության համար երկնաշնորհ բարեբախտություն» և գահաժառանգության «ինստիտուտի ամենալուրջ քննության» շրջան ոչ միայն «Կիլիկիո, այլև համաշխարհային պատմության մեջ»: Այստեղ ևս, ինչպես Թորոս Բ-ի դեպքում, սկզբնաղբյուրները հայտնում են, որ երկրի ղեկավարը կրոնավորական կարգ է մտել: Այս հանգամանքը խոսում է եկեղեցական և աշխարհիկ իշխանությունների միացման սկզբունքի, ինչպես նաև թագավորի դերի բարձրացման ու լեգիտիմության ապահովման մասին նաև հոգևոր բնագավառում:

Գահաժառանգության և «լեգիտիմության» հարցերին ավելի մասնագիտական պատասխան տալու ակնկալությամբ, հեղինակն անդրադառնում է Կիլիկիայի միջազգային իրավական կարգավիճակին ԺԳ դարի ողջ ընթացքում. Ռումի սելջուկյան սուլթանության գերակայության ճանաչումից (1218/9 թ.) անցումը Մեծ մոնղոլների խանությունից վասալական կախվածությանը (էջ 297–315): Այստեղ, հայ-սելջուկյան դրամների մասին խոսելիս Լ. Տեր-Պետրոսյանի ուշադրությունից վրիպել է դրամագետ Յ. Տեր-Ներսիսյանի հետազոտությունը[14]: Դրամի հատման խնդիրը, բացի վասալական կախվածության փաստարկ լինելուց, կարող էր նշանակել նաև համատեղ շուկա, տնտեսական գործունեության դաշտ ստեղծելու երկու պետությունների մտահոգության մասին, խնդիր, որը կարող է նոր հետազոտությունների դուռ բացել:

Քյուսե-Դաղի ճակատամարտում (1243 թ.) Ռումի սուլթանության պարտությունից հետո, Կիլիկիան կախվածության մեջ է ընկնում մոնղոլների տիրակալությունից. պատմագրության մեջ հաճախ օգտագործվող «դաշինք» տերմինը ճիշտ չի արտացոլում իրերի վիճակը, քանի որ մոնղոլներն իրենց իշխանությունը ճանաչած երկրները ևս համարում էին պետության անքակտելի մասը: Այդ մասին են վկայում տարեկան հարկի վճարման, թանկարժեք ընծաների մատուցման, մոնղոլների ռազմարշավներին մասնակցության, պաշտոնյաների երթևեկի ծախսերն հոգալու պարտավորությունները, որոնք ստանձնել է Կիլիկյան Հայաստանը: Այնուամենայնիվ, գիտնականը նշում է, որ «...Կիլիկիո Հայոց թագավորության վասալական կախվածությունը Մոնղոլական խանությունից առանձնապես չէր սահմանափակվում նրա անկախությունը, մանավանդ ներքին քաղաքականության բնագավառում» (էջ 311): Ըստ հեղինակի՝ այդ հարաբերությունների լավագույն

[14] Y. T. N e r s e s s i a n. Attribution and dating of Armenian Bilingual Trams, Los Angeles, 1983.

գնահատականը տվել է Գրիգոր Ակներցին, անվանելով այն «դաշինք սիրոյ եւ հնազանդութեան»[15]: Լ. Տեր-Պետրոսյանը խնդրին անդրադառնում է նաև մոնղոլական խանության նկատմամբ Կիլիկիայի ունեցած պարտականությունների տեսանկյունից, ընդգծելով, որ մոնղոլական տիրապետության շրջանում իշխանության «լեգիտիմությունը» ապահովվում էր մոնղոլների կողմից ճանաչման փաստով: Հետաքրքիր կլիներ ներկա դեպքում նաև նկատի ունենալ, որ նույն կարգին ենթարկվում էր նաև հոգևոր իշխանությունը սկսած Սասանյան տիրապետությունից, և հարցը քննել ամբողջական տարողությամբ: Մոնղոլական գերակայության ընդունումը քննարկվում է նաև համահայկական շահերի տեսանկյունից: Հեղինակն այնուհետև սկզբնաղբյուրներից վկայություններ է բերում Մեծ Հայքի հոգևոր կենտրոնների նկատմամբ Լևոն Բ-ի տածած հոգածության մասին (էջ 325-327), այդ տեսանկյունից դիտելով Կիլիկիայի թագավորության և Ամենայն Հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունները Սյունյաց աթոռի հետ, թափանցում է դրանց քաղաքական օգտակարության ոլորտը (էջ 327–332):

Հեթում Բ-ի գահաժառանգման դեպքը ամենադասականն է միջնադարյան հայ իրավունքի տեսանկյունից, քանի որ նա ժառանգել է գահը ավագագույն որդու[16] հանգամանքով՝ ստանալով «Հայոց արքունի ատյանի»[17] հավանությունը: Հեթումի իշխանության կարևորագույն առանձնահատկություններից էր նաև այն, որ նա երբեք չամուսնացավ և չթագադրվեց[18]: Այդ իսկ պատճառով պատմաբանների ուշադրության առարկան է դառնում այն հանգամանքը, որ սկզբնաղբյուրները նրան պատվում են միայն «թագապահ», «թագակալ» և «աթոռապահ» տիտղոսներով (էջ 339): Գահաժառանգման իրավունքի տեսանկյունից հեղինակն անդրադառնում է նաև Հեթումի բազմակի հրաժարականներին, փորձում պարզել դրանցից յուրաքանչյուրի պատճառը (էջ 341–343): Միայն իր եղբայր Թորոսի օգտին, ինչպես պարզվում է, Հեթում Բ-ը հրաժարվել է երիցս: Գահաժառանգության տեսանկյունից, այստեղ «էականը... իշխանության փոխանցման և վերստանձման...փաստն է» (էջ 345) Հեթում Բ-ից անմիջապես հետո ծնված եղբորը, պահելով գահաժառանգության իրավունքի գլխավոր սկզբունքը՝ Արքունի ատյանի[19] հավանությամբ իշխանությունը հանձնել եղբայրներից ավագագույնին (էջ 346): Հետաքրքիր է, որ Թորոսի իշխանությունը սկզբնաղբյուրներում անվանվում է «պարոնություն»: 1307 թ. թագավորի և նրա խնամակալի սպանությունը համարելով ծայրագավառային մոնղոլ պաշտոնյայի ձեռնարկած ինքնագլուխ քայլ (էջ 368–374)՝ քաղաքագետ-պատմաբանը մեղադրում է Հեթում Բ-ին, որ նա իր գործունեության ընթացքում չկարողացավ կողմնորոշվել կրոնավորական սքեմի և թագի միջև:

Հիշատակված քաղաքական հաշվեհարդարից հետո Կիլիկիայի գահն անցնում է Հեթում Բ-ի կրտսեր եղբայրներից Օշինին[20]:

---

[15] *Գ ր ի գ ո ր Ա կ ն ե ր ց ի. Պատմութիւն թաթարաց, Երուսաղեմ, 1974, էջ 31: Հմմտ. նաև՝ Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 285:*

[16] *Հեթումի անդրանիկ որդի Կոստանդինը մահացել է մանուկ հասակում (գրախոսվող գրքի էջ 333, 338):*

[17] *Այս տերմինը հաճախ է օգտագործում Լ. Տեր-Պետրոսյանը՝ օգտվելով խաչակրաց արևելքի պաշտոնեության անվանացանկից: Սկզբնաղբյուրներում, դրա փոխարեն, հիշատակվում են երկրամասի զորավարներն ու իշխանները, այլ կերպ ասած՝ պարոնները:*

[18] *Սկզբնաղբյուրներն այդ հանգամանքը բացատրում են կրոնական կյանքին նվիրվելու կամ երկնային թագավորությանն արժանանալու ցանկությամբ (գրախոսվող գրքի էջ 339):*

[19] *Հիշարժան է, որ արքունի ատյանի կազմում Հայթոնը հիշատակում է նաև կաթողիկոսին (գրախոսվող գրքի էջ 346, նաև ծան. 41):*

[20] *Սկզբնաղբյուրների համադրությամբ Լ. Տեր-Պետրոսյանը փորձում է ցույց տալ, որ սկզբնաղբյուրներում շփոթ գոյություն ունի հարցի կապակցությամբ: Այս առումով հատկապես հետաքրքիր է 1308 թ. գրված*

Հեղինակը բացահայտում է կիլիկյան գահաժառանգության կարգի ևս մեկ առանձնահատկություն. այդ իրավունքը չէր տարածվում դավաճանի (իմա՛ բռնագավթչի) վրա, անգամ նրա ավագ լինելու պարագայում (էջ 386):

Ըստ Լ. Տեր-Պետրոսյանի, Լևոն Դ-ի իշխանության տարիներին փոխվում է Կիլիկիայի Հայոց թագավորության իրավական կարգավիճակը. Իշխանության քայքայումով թեպետ Կիլիկյան ազատվեց մոնղոլների գերակայությունից, սակայն մեն-մենակ մնաց Եգիպտոսի մամլուքների դեմ պայքարում (էջ 405): 1337 թ. Լևոնը ստիպված էր պայմանագիր կնքել Եգիպտոսի հետ, որով իր երկրի մի մասը՝ Այասի հետ, զիջեց Եգիպտոսին՝ պարտավորվելով խզել հարաբերություններն Արևմուտքի հետ: Չունենալով արու ժառանգ՝ Լևոն Դ-ը գահը կտակում է հորաքրոջ որդուն, որը Բյուզանդական կայսրությունում հասել էր հասարակական բարձր դիրքի (էջ 410–411):

Հաջորդ բաժնում քննելով հայ իշխանների կողմից Գիի սպանության պատճառները՝ Լ. Տեր-Պետրոսյանը կարծում է, որ դրանք սովորական պատրվակներ են (նույնիսկ լատինասիրության մեջ մեղադրանքը). «...պարզապես հայտնվել էին ուժեր՝ հանձինս Կոստանդին Նղիրցու և իր կողմնակիցների, որոնք պետական հեղաշրջման միջոցով տիրել էին Հայոց թագավորությանը» (էջ 420–424):

Լ. Տեր-Պետրոսյանը, հակադրվելով Ժան Դարդելի հաղորդած տեղեկությանը, ցույց է տալիս, որ Կոստանդինի Գ-ի Հայր Պաղտին մարաջախտը Լևոն Դ-ի չորս խնամակալներից մեկն է և արյունակցական հարազատություն ունի Կոստանդին թագավորահոր (մահ. 1263) հետ (էջ 426–432): Այնուամենայնիվ, շեշտվում է, որ Կոստանդին Գ-ի «լեգիտիմությունը» խոցելի էր, քանի որ կենդանի էին «Հայոց արքայատոհմի թեկուզ իգական գծով ուղիղ շառավիղները՝ Հովհաննես-Զիվան Լուսինյանի որդիներ Բոհեմունդը և Լևոնը» (էջ 433–434), որոնցից փորձում էր ազատվել թագավորը: Հետևողական է նաև հեղինակի այն մոտեցումը, որ Կոստանդնի օրոք Հայոց պետության տարածքային կորուստները չեն բխում թագավորի անձնական արժանիքներից, այլ ժամանակի միջազգային-քաղաքական իրավիճակից, այն «...երկրի ռեսուրսների սպառման և քաղաքական մեկուսացման հետևանք էր» (էջ 436):

Գիտնականը, հիմնվելով Բրիտանական թանգարանի Or5458-Arm.116 ձեռագրում գտնվող մի վկայության վրա, կարողացել է պարզել, որ 1362–1364 թթ. Կիլիկիայի գահն անցել է Կոստանդին Գ-ի այրուն՝ Լամբրոնի Հեթումյան տնից սերող Մարիոն թագուհուն, որն ըստ այդ սկզբնաղբյուրի իշխել է մեկ տարի ամուսնու մահից հետո, մեկ տարի էլ Կոստանդին Դ-ի de facto իշխանության առաջին տարում, որին 10 ամիս հաջորդել է Հովհաննես Զուան իշխանի որդի Լևոնը (էջ 437): Քննելով սկզբնաղբյուրների տեղեկությունները, հեղինակը եկել է հետևյալ համոզման. «Քանի որ Կոստանդին Դ (III) որդիները մահացած էին... Հայոց գահը ժամանակավորապես անցել է Մարիոն թագուհուն, 1363 թվականին Կիլիկիո Արքունի ատյանը որոշում է կայացրել գահակալելու հրավիրել երկրի միակ օրինական թագաժառանգ Լևոն Լուսինյանին...Սակայն Լևոնն ինչ-ինչ պատճառներով հրաժարվել է դրանից, և Հայոց իշխաներն ստիպված են եղել որոշ ժամանակ համոզել ու սիրաշահել նրան՝ այդ նպատակով նույնիսկ նրա անունով դրամ հատելով» (էջ 442): Հետազոտողն ուշադրություն է հրավիրում վերջին երկու Կոստանդին թագավորների նկատմամբ Ժան Դարդելի թշնամական վերաբերմունքի վրա, անդրադառնում է Կիպրոսի թագավոր Պետրոս Ա-ի հետ մշակած համատեղ ծրագրին (էջ 445-55): Դարդելը Կոստանդին Նղիրցուն է վերագրում իր թագավորությունը մամլուքներին հանձնելու մտահղացումը, որի պատճառով էլ իբր հայոց իշխանները սպանել են նրան: Ուշ շրջանի ժամանա-

---

հիշատակարանի տեղեկությունը. «...ի պարոնութեանս Հայոց Աւշնի եւ եղբաւր իւրոյ Ալինախի», և 1310 թ. գրված հիշատակարանը. «Ի թուականիս Հայոց ՉՃԹ, յաշխարհակալութեան ազգին նետողաց Ղարպանտա դանին, եւ Հայոց թագաւ[որութեան] Ալինախին» (գրախոսվող գրքի էջ 383–384, ծան.14 և 15):

կագիրներից մեկը կարծում է, որ նա շարունակել է թագավորել Լևոն Ե-ից հետո, սակայն Լ. Տեր-Պետրոսյանը փաստում է, որ 1373 թ. հետո նրա անունն այլևս չի հիշատակվում հայկական ձեռագրերի հիշատակարանների թվագրման բանաձևերում:

Կիլիկիայի վերջին գահակալ Լևոն Ե-ի գահակալման մասին խոսելիս, հեղինակն իր պարտքն է համարում անդրադառնալ Ժան Դարդել պատմիչի երկին և նրա կողմից կիլիկյան վերջին թագավորի կենսագրության, Կիլիկիա ժամանման[21] և թագադրման մանրամասների բացահայտմանը: Լևոն Ե-ի մահից հետո (1393 թ.) «Հայոց թագավոր» տիտղոսն անցնում է Կիպրոսի թագավորներին, նրանցից էլ Սավոյայի դուքսերին, Պիեմոնտի և Իտալիայի թագավորներին: Այս թագավորությունից մնացած «գործող հաստատություն» է համարում նաև Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսարանը (էջ 465):

Եզրափակման մեջ կետ առ կետ ընդհանրացվում են հետազոտության հիմնական բոլոր դրույթները. 1. գահաժառանգության կարգում ավագության սկզբունքի կիրառումը, 2. զավակների միջև ընտրություն կատարելու գահակալին վերապահված իրավասությունը, 3. որդիների միջև երկիրը բաժանելու իրավասությունը, 4. թագավորը երկիրը կարող էր կտակել ցանկացած մեկի, 5. որդիների նկատմամբ եղբայրներին նախապատվություն տալու իրավունքը, 6. արական գծով ժառանգի սպառման դեպքում գահն անցնում էր դստերը, 7. թագադրված արքայադստեր ամուսնու կարգավիճակին և նրանց զավակների ժառանգական իրավունքին վերաբերող հարցեր, 8. հարճորդիները զրկված էին գահը ժառանգելու իրավունքից, 9. թագավորի կողմից գահակից նշանակելու սովորույթը, 10. թագավորի ընտրության իրավունքը, 11. իշխանության բռնազավթման փորձերը, 12. Արքունի Ատյանի դերը, 13. խնամակալի գործակալությունը, 14. գահաժառանգությունն ապահովվել է սովորութային իրավունքով, 15. «լեգիտիմության» պահպանումը:

Ինչպես գրախոսվող գրքի առաջին հատորում, այնպես էլ ներկա մենագրության հավելվածում հրապարակվում են Կիլիկիայի պատմության մինչ օրս չհրապարակված սկզբնաղբյուրներ: Յուրաքանչյուր բնագրի ուղեկցում է պատմաղբյուրագիտական ուշագրավ հետազոտություն՝ պատմաբանասիրական մանրակրկիտ ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով: Այս հատորի հավելվածները չորսն են. 1. Անանունի «Պատմութիւն սրբոց հարցն մերոց» աշխատությունը (էջ 495–526), 2. Հեթում Նղիրցու պատմությունը (էջ 527–553), 3. Անանուն ժամանակագրական գրառումներ (XIV դ.) (էջ 554–558), 4. Ավետիք Տիգրանակերտցու Գավազանագիրքը (էջ 559-573):

Առաջին հավելվածը ԺԱ–ԺԲ դդ. Փոքր Ասիայի, Հայաստանի և Հյուսիսային Ասորիքի պատմության կարևոր սկզբնաղբյուր է: Երկի եզակի ընդօրինակությունը պահպանվում է Երևանի Մատենադարանի 7620 մատյանում, ԺԸ դարի գրչական ընդօրինակությամբ: Հրատարակիչն առաջաբանում անդրադառնում է այս հուշարձանում տեղ գտած պատմական կարևորագույն տեղեկություններին, մասնավորապես հայագիտությանը քիչ հայտնի Սևերակի Պոդոսակյան իշխանության պատմությանը և հուշարձանը թվագրում է 1248–1275 թթ.:

Հաջորդ մատենագրական երկը հրատարակվում է Բրիտանական թանգարանի Or.5458-Arm.116 մատյանից և Լ. Տեր-Պետրոսյանի կողմից վերագրվում է Հեթում Նղիրցուն: Բնագիրն ընդգրկում է 1099-1344 թթ. իրադարձությունների նկարագրությունը, որի ԺԴ դարն ընդգրկող հատվածը «հուշագրական նոթագրություն է հիշեցնում» (էջ 528), ուր նկարագրված են հեղինակի դիվանագիտական այցելությունները: Գիտնականն անդրադառնում է Կիլիկիայի թագավորության պատմության մեջ Նղիրի և

---

[21] *Հատկապես խոսում է Կոստանդին Գ-ի կնոջ՝ Մարիոն թագուհու 1373 թ. խնամակալ դառնալու փաստի և Լևոն Ե-ի նշանակած խնամակալների խորհրդի մասին: Հեղինակը մասնավորապես շեշտում է, որ Կիլիկիայում բացառիկ երևույթ է կին խնամակալի նշանակումը, որը Լ.Տ.-Պ.-ն բացատրում է վերջինիս օծյալ լինելու հանգամանքով և արևմտաեվրոպական թագավորական ընտանիքների հետ ազգակցական կապերով (էջ 437-438, 455):*

այնտեղ կառավարող իշխանական ընտանիքի անդամների, մասնավորապես՝ Հեթումի խաղացած դերին, վերջինիս դիվանագիտական բացառիկ գործունեությանը: Ելնելով բնագրի ժանրային առանձնահատկություններից՝ այս երկը, կարծում ենք, պետք է անվանել ժամանակագրություն:

Երրորդ հավելվածը ևս հրատարակված է Բրիտանական թանգարանի նույն ձեռագրից և կարևոր ժամանակագրական տեղեկություններ է պարունակում ԺԴ դ. երկրորդ կեսի իրադարձությունների մասին:

Գրքի վերջին հավելվածում հրապարակված է ԺԷ–ԺԸ դդ. հեղինակ Ավետիք Տիգրանակերտցու (նաև Ամիդեցի կամ Եվդոկացի) Գավազանագրքի (կամ Ժամանակագրության)՝ Կիլիկիային վերաբերող հատվածը ըստ Մատենադարանի 1492 ինքնագիր մատյանի: Ընդգծելով այս ժամանակագրության քաղաքական բնույթը և դրանում պարունակող տեղեկությունների այլ սկզբնաղբյուրներից հայտնի լինելը՝ բնագրի հրատարակիչը խնդիր է դրել երկի հրատարակմամբ ուղղել Լևոն (Ե) վերջին թագավորի գահակալման թվականների հետ կապված մի թյուրիմացություն, որը շրջանառության մեջ է ժամանակակից պատմագրության մեջ:

Աշխատանքի բարձր որակի մասին են խոսում նաև հեղինակի կազմած մանրակրկիտ ցանկերը (էջ 575–667), որոնք կարևոր բանալի են գրքի օգտագործման համար:

Ամփոփենք. մեր առջև է հսկայածավալ մի հետազոտություն, ուր միջնադարագետ-պատմաբանի, աղբյուրագետի և քաղաքագետի տեսանկյունից վերարծարծված են Կիլիկիայի հայկական պետության պատմության բազմաթիվ խնդիրներ առաջարկված թեմայի շրջանակներում, քննարկված են մինչ այս ուշադրության չարժանացած հարցեր: Մեր կողմից աշխատության մանրամասների քննարկումը նպատակ ուներ հետազոտողների ուշադրությունը հրավիրել առանձին հարցերի լուծումների վրա: Կատարված դիտողությունները վերաբերում են աշխատության դետալներին և ցույց են տալիս հսկայածավալ այն աշխատանքի կարևորությունը, որով Լևոն Տեր-Պետրոսյանն իր լուման է դնում Կիլիկյան Հայաստանի պատմության քննարկված հիմնախնդիրների պարզաբանման մեջ: Աշխատության յուրաքանչյուր տողում իրար են լրացնում վաստակաշատ աղբյուրագետ-պատմաբանն ու հսկայական փորձ ունեցող քաղաքագետը՝ հեղինակին հատուկ բյուրեղացած հայերենով ու հատու գրչով:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ